ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2026 թվականի ապրիլի 21-ին կնքված N ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/30-1 գնման պայմանագրի

ք. Երևան «11» 05 2026թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Հ. Զաքոյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Արմիմպորտս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Տ. Թումաղյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 21-ին կնքված N ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/30-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1 և 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի «Ապրանք»-ի «մատակարարման» «հասցեն» սյունակում 13-րդ չափաբաժնի մասով խմբագրել և ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «ՀՀ, ք. Երևան, Տերյան 74»:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	«Արմիմպորտս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	Սևան փողոց 28/1, Երևան, Հայաստան
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 2470100531030000	Հ/Հ 24144003779400
ՀՎՀՀ 01507028	ՀՎՀՀ 00154508
Ռեկտոր՝ _____ Հ. Զաքոյան	Տնօրեն՝ _____ Տ. Թումաղյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.